ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ա

ք. Երևան «12» սեպտեմբերի 2017թ.

«ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե», ի դեմս Կոմիտեի աշխատակազմի ղեկավար Մ. Մակինյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնքի 40հա տարածք զբաղեցնող տնամերձերի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 76 օր (2.5 ամիս):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար,

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում,

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ,

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում,

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 39 343 576 (երեսունինը միլիոն երեք հարյուր քառասուներեք հազար հինգ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ, որից 6 557 263 (վեց միլիոն հինգ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները, ընդ որում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցներր Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է,

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է,

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է,

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է,

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 39 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ ԷԵԲՊՆ ջրային տնտեսության պետական կոմիտե | <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ |
| ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա | ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Արդյունաբերական հանգույց, Սայաթ-Նովայի փող. Թիվ 32, հեռ. 091-422492 |
| Հ/Հ 900011015402 | էլ. փոստ hidroveranorogum.ak@mail.ru |
| ՀՎՀՀ 02555816 | << Հայբիզնեսբանկ ՓԲԸ >> ՓԲԸ Մասիս մ/ճ |
| Կոմիտեի աշխատակազմի ղեկավար | h/h 11500294360943 |
| | ՀՎՀՀ 03801977 |
| | Ընկերության տնօրեն |
| _____ Ա. ՄԱԿԻՆՅԱՆ | ----------Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*«12» սեպտեմբերի 2017թ. կնքված*
*ՀՀԷԵԲՊՆՋՏՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/4-Ա ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ՝

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՔԻՆ ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 40ՀԱ ՏԱՐԱԾՔ ՋԲԱՂԵՑՆՈՂ ՏՆԱՄԵՐՁԵՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| հ/հ | Աշխատանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի արժեքը հազ.դրամ (թվերով) | Ընդհանուր գումարը հազ.դրամ (թվերով) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | 1. Ջրընդունիչ կառուցվածք | | | | |
| | *1.1 Հողային աշխատանքներ* | | | | |
| 1.1.1 | VI կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով, բուլդոզերի , կամ էքսկավատորի բազայի վրա | մ$^3$ | 19.30 | 5.868 | 113.243 |
| 1.1.2 | Խրամուղու ստեղծում ձեռքով փխրեցված IVկարգի բնահողերում | մ$^3$ | 19.3 | 3.864 | 74.576 |
| 1.1.3 | Քանդած բնահողերի տեղափոխում ձեռքի սայլակներով 30մ | տ | 44.39 | 0.981 | 43.568 |
| 1.1.4 | Ավելորդ բնահողերի հարթեցում տեղում ձեռքով | մ$^3$ | 19.3 | 1.323 | 25.531 |
| | *Ջրահեռացման աշխատանքներ* | | | | |
| 1.1.5 | Ժամանակավոր անջրպետի ստեղծման համար ջրագծի օգտակար հանույթի ավազակավային բնահողերի տեղափոխում ձեռքով սայլակներով 74մ | տ | 12.60 | 1.490 | 18.778 |
| 1.1.6 | Ժամանակավոր անջրպետի ստեղծում ջրագծի օգտակար հանույթի ավազակավային բնահողերից ձեռքով տուփանումով | մ$^3$ | 7 | 0.916 | 6.415 |
| 1.1.7 | Φ275մմ պողպատե խողովակի ժամանակավոր տեղադրում սելավատարի ջրերի հեռացման համար (առանց արժեքի) | մ | 10 | 1.309 | 13.090 |
| 1.1.8 | Ժամանակավոր առվակի և խյուսափոսի ստեղծում ձեռքով հետահար մուրճով VI կարգի ժայռային բնահողերում | մ$^3$ | 1.75 | 21.422 | 37.488 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.1.9 | Ֆիլտրվող ջրերի հեռացում 25մ3/ժամ "ԳՆՕՄ" պոմպով | մեք/ժամ | 5.5 | 1.206 | 6.592 |
| 1.1.10 | Ժամանակավոր անջրպետի բանդում ձեռքով բարձումով սայլակների վրա | $մ^3$ | 7.0 | 2.187 | 15.309 |
| 1.1.11 | Ավազակավային բնահողերի տեղափոխում սայլակներով մոտ 10մ երկրորդ հերթի անջրպետի ստեղծման համար | տ | 12.6 | 0.981 | 12.367 |
| 1.1.12 | Երկրորդ հերթի ժամանակավոր անջրպետի ստեղծում ավազակավային բնահողերից ձեռքով տոփանումով | $մ^3$ | 7 | 0.916 | 6.415 |
| 1.1.13 | Ժամանակավոր անջրպետի բանդում ձեռքով բարձումով սայլակների վրա | $մ^3$ | 7.0 | 2.187 | 15.309 |
| 1.1.14 | Ավազակավային բնահողերի տեղափոխում սայլակներով մոտ 20մ հարթեցումով | տ | 12.6 | 0.981 | 12.367 |
| 1.1.15 | Ժամանակավոր առվակի և խյուսափոսի հետլիցք ձեռքով , IV կարգ | $մ^3$ | 1.75 | 1.120 | 1.960 |
| 1.1.16 | Φ275մմ պողպատե խողովակի ապամոնտաժ | մ | 10 | 0.785 | 7.852 |
| | *1.2 Բետոնային աշխատանքներ* | | | | |
| 1.2.1 | Φ30մմ անցքերի գայլիկոնում ժայռի մեջ, L=30սմ | հատ | 56 | 1.211 | 67.807 |
| 1.2.2 | Ցցաձող Φ20մմ, արժեք. մատակարարում և տեղադրում, 56հատ | տ | 0.0692 | 398.884 | 27.587 |
| 1.2.3 | Պոլիմեր ցեմենտե շաղախ, արժեք, մատակարարում | մ3 | 0.008 | 31.290 | 0.250 |
| 1.2.4 | Զրթափ և պարզարան միաձույլ բետոնից B15, F150, W4 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | $մ^3$ | 13.67 | 83.385 | 1139.869 |
| 1.2.5 | Յարցև ջրաչափական կառույց միաձույլ բետոնից B15, F150, W4 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | $մ^3$ | 2.28 | 92.438 | 210.758 |
| 1.2.6 | Հոր միաձույլ բետոնից B12.5 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | $մ^3$ | 2.52 | 61.507 | 154.999 |
| 1.2.7 | Միաձույլ բետոն հենարանների ստեղծում B12.5 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | $մ^3$ | 0.040 | 50.471 | 2.019 |
| 1.2.8 | Դիմապատ միաձույլ բետոնից B15, F150, W4 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | $մ^3$ | 0.392 | 83.385 | 32.687 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.2.9 | Ամրան Φ12մմ, արժեք. մատակարարում և տեղադրում | տ | 0.05106 | 398.884 | 20.368 |
| 1.2.10 | Կար N1, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ | 10 | 5.127 | 51.271 |
| | *1.3 Մետաղական կոնստրուկցիաներ, խողովակներ, խողովակամրաններ* | | | | |
| 1.3.1 | Ջրաչափական ծող, արժեք, մատակարարում և տեղադրում | հատ | 1 | 3.737 | 3.737 |
| 1.3.2 | Փականներ ГС60-200, ГС-80-200 իր վերհաններով, փեղկով, արժեք, մատակարարում մոնտաժ | տ | 0.521 | 807.283 | 420.595 |
| 1.3.3 | Φ273x5մմ պողպատե խողովակ, արժեք, մատակարարում մոնտաժ | մ | 1.5 | 23.161 | 34.741 |
| 1.3.4 | Φ325x5մմ պողպատե կարճախողովակ, արժեք, մատակարարում, տեղադրում | մ | 1.05 | 29.434 | 30.905 |
| 1.3.5 | Կարճախողովակների խծուծում, ներառյալ արժեքը, մատակարարումը և տեղադրումը | կգ | 4 | 2.586 | 10.344 |
| 1.3.6 | Պողպատե դիաֆրագմա 500x500x5մմ, արժեք, մատակարարում, տեղադրում | տ | 0.0098 | 571.623 | 5.602 |
| 1.3.7 | Φ5մմ ճաղեր, արժեք, մատակարարում և տեղադրում | տ | 0.00050 | 481.989 | 0.241 |
| 1.3.8 | Պողպատե ձևավոր մասեր- Φ250մմ արմունկ a=45°, տեղադրում | տ | 0.0660 | 832.012 | 54.913 |
| 1.3.9 | Արմունկ Φ250մմ, a=45°, արժեք, մատակարարում | հատ | 2 | 21.976 | 43.953 |
| 1.3.10 | Φ250մմ թուշե սողնակ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 208.776 | 208.776 |
| 1.3.11 | Φ250 պողպատե կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 3.0 | 24.110 | 72.330 |
| 1.3.12 | Φ250 պողպատե ազատ կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 18.744 | 18.744 |
| 1.3.13 | Φ250 պոլիէթիլենային ականոց Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 20.334 | 20.334 |
| 1.3.14 | Պողպատե ձևավոր մասեր- պողպատե անկյունակ 50x50x5մմ, տեղադրում | տ | 0.0128 | 832.012 | 10.666 |
| 1.3.15 | Պողպատե անկյունակ 50x50x5մմ, արժեք, մատակարարում | մ | 3.4 | 1.846 | 6.275 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1.3.16 | Պողպատե կափարիչ 5մմ հաստությամբ, արժեք, մատակարարում, տեղադրում | տ | 0.0471 | 571.324 | 26.909 |
| 1.3.17 | Կողպեք, ծխնիով, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1 | 5.172 | 5.172 |
| 1.3.18 | Մետաղական աստիճաններ,արժեք, մատակարարում, տեղադրում | տ | 0.0136 | 493.628 | 6.713 |
| | *1.4 Մեկուսիչ աշխատանքներ* | | | | |
| 1.4.1 | Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ շրակայուն ներկով | մ$^2$ | 15 | 0.996 | 14.946 |
| | *1.5 Այլ աշխատանքներ* | | | | |
| 1.5.1 | Բետոնի և այլ շինանյութերի տեղափոխում ձեռքով բանվորուժի օգնությամբ 74մ բանվոր ուժի օգնությամբ մեխանիզմներին անհասանելի հատվածում PK0+00-0+74 | տ | 41.4 | 1.911 | 79.019 |
| | Ընդամենը՝ ըստ 1 բաժնի | | | | 3193.39 |
| | 2. Գրատաք | | | | |
| | *2.1 Հողային աշխատանքներ* | | | | |
| 2.1.1 | VI կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով, բուլդոզերի , կամ էքսկավատորի բազայի վրա | մ$^3$ | 218.0 | 5.868 | 1279.116 |
| 2.1.2 | Ասֆալտի կտրում սղոցով | մ | 1456.0 | 0.095 | 137.932 |
| 2.1.3 | VI կարգի փխրեցված բնահողերի բանդում էքսկավատորով կողլիցքով | մ$^3$ | 138 | 0.610 | 84.210 |
| 2.1.4 | VI կարգի գրունտի մշակում ձեռքով, հետահար մուրճով , հատակի լրամշակում | մ$^3$ | 8.00 | 21.422 | 171.374 |
| 2.1.5 | V կարգի բնահողերի բանդում էքսկավատորով բարձումով | մ$^3$ | 5 | 0.675 | 3.376 |
| 2.1.6 | V կարգի բնահողերի բանդում էքսկավատորով բարձումով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության և $6^0$-$15^0$ երկայնական թեքությունների պայմաններում | մ$^3$ | 18 | 1.771 | 31.877 |
| 2.1.7 | V կարգի բնահողերի բանդում էքսկավատորով բարձումով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ$^3$ | 50 | 0.807 | 40.326 |
| 2.1.8 | IV կարգի բնահողերի բանդում էքսկավատորով կողլիցքով | մ$^3$ | 123.0 | 0.409 | 50.257 |
| 2.1.9 | IV կարգի բնահողերի բանդում էքսկավատորով բարձումով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության և $6^0$-$15^0$ երկայնական թեքությունների պայմաններում | մ$^3$ | 12 | 1.242 | 14.901 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.1.10 | IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ$^3$ | 217 | 0.602 | 130.566 |
| 2.1.11 | IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ$^3$ | 69.0 | 0.488 | 33.640 |
| 2.1.12 | III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով, եղանյական թեքությունները 6°-15°, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ$^3$ | 42 | 0.951 | 39.922 |
| 2.1.13 | III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ$^3$ | 264.0 | 0.353 | 93.223 |
| 2.1.14 | III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ$^3$ | 165 | 0.469 | 77.451 |
| 2.1.15 | Փափուկ բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 1կմ հետլիցքի համար, 16մ3 | տ | 280.5 | 0.896 | 251.364 |
| 2.1.16 | Խրամուղու հատակի լրամշակում ձեռքով IVկարգի բնահողերում | մ$^3$ | 55 | 3.864 | 212.521 |
| 2.1.17 | Խրամուղու հատակի լրամշակում ձեռքով IIIկարգի բնահողերում | մ$^3$ | 24 | 2.191 | 52.590 |
| 2.1.18 | Խրամուղու մշակում ձեռքով IVկարգի բնահողերում 4հատ հատումների հատվածում | մ$^3$ | 1 | 3.864 | 3.864 |
| 2.1.19 | Խրամուղու մշակում ձեռքով III կարգի բնահողերում 4հատ հատումների հատվածում | մ$^3$ | 3 | 2.191 | 6.574 |
| 2.1.20 | Արահետի լայնացում ձեռքով IVկարգի բնահողերում | մ$^3$ | 30 | 3.864 | 115.921 |
| 2.1.21 | VI կարգի գրունտի մշակում ձեռքով, հետահար մուրճով, հենարանի հիմքի քանդում | մ$^3$ | 0.25 | 21.422 | 5.355 |
| 2.1.22 | Խրամուղու մշակում ձեռքով IVկարգի բնահողերում (VI կարգ փխրեցված) | մ$^3$ | 80 | 3.864 | 309.121 |
| 2.1.23 | Ավազե նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ, ներառյալ ավազի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ$^3$ | 90 | 4.285 | 385.687 |
| 2.1.24 | Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տոփանումով | մ$^3$ | 419 | 0.916 | 383.970 |
| 2.1.25 | Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տոփանումով, ասֆալտբետոնե ծածկի հատվածում | մ$^3$ | 15 | 0.916 | 13.746 |
| 2.1.26 | Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի IV բնահողերով, տոփանումով, ասֆալտբետոնե ծածկի հատվածում | մ$^3$ | 77 | 1.119 | 86.170 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.1.27 | Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի բնահողերով, IVկարգ | մ$^3$ | 321.0 | 0.044 | 14 040 |
| 2.1.28 | Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի բնահողերով, IIկարգ | մ$^3$ | 64.0 | 0.038 | 2.458 |
| 2.1.29 | Ավելորդ բնահողերի հարթեցում տեղում ձեռքով | մ$^3$ | 30.3 | 0.916 | 27.767 |
| 2.1.30 | Ավելորդ բնահողերի հարթեցում բուլդոզերով տեղափոխումով 10մ | մ$^3$ | 75.3 | 0.063 | 4.740 |
| 2.1.31 | Ավելորդ բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 1կմ հետլիցքի համար, (73*2+229*2) | տ | 604.0 | 0.896 | 541.261 |
| 2.1.32 | Պողպատե Φ273մմ խողովակների տեղափոխում 74մ բանվոր ուժի օգնությամբ մեխանիզմներին անհասանելի հատվածում PK0+00-0+74 | տ | 0.75 | 1.911 | 1.434 |
| 2.1.33 | Պոլիէթիլենային Φ250մմ խողովակների տեղափոխում միջինը 50մ բանվոր ուժի օգնությամբ մեխանիզմներին անհասանելի հատվածում PK0+00-0+74 և ՊԿ1+29-ՊԿ2+32 | տ | 1.4408 | 1.633 | 2.353 |
| 2.1.34 | Ավազի և բետոնի տեղափոխում ձեռքով բանվորուժի օգնությամբ միջինը 50մ բանվոր ուժի օգնությամբ մեխանիզմներին անհասանելի հատվածում PK0+00-0+74 և ՊԿ1+29-ՊԿ2+32 | տ | 65.565 | 1.633 | 107.087 |
| 2.1.35 | Ճանապարհի հարթեցում բուլդոզերով | մ2 | 990 | 0.002 | 2.112 |
| 2.1.36 | Խճի նախապատրաստական շերտ 15սմ հաստ., ներառյալ խճի արժեքը, մատակարարումը, տեղադրումը | մ$^2$ | 394.5 | 1.341 | 529.021 |
| 2.1.37 | Խոշորահատիկ ասֆալտաբետոն 6.5սմ հաստությամբ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը, տեղադրումը | մ$^2$ | 394.5 | 4.456 | 1757.932 |
| 2.1.38 | Մանրահատիկ ասֆալտաբետոն 3.5սմ հաստությամբ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը, տեղադրումը | մ$^2$ | 394.5 | 3.734 | 1473.010 |
| | *2.2 Բետոնային աշխատանքներ* | | | | |
| 2.2.1 | Միաձույլ բետոն հենարանների և օձիքի ստեղծում B12.5 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ$^3$ | 0.490 | 50.471 | 24.731 |
| | *2.3 Մետաղական կոնստրուկցիաներ, խողովակներ, խողովակամրաններ* | | | | |
| 2.3.1 | Φ250x9.6մմ պոլիէթիլենային խողովակներ, P=0.6ՄՊա, արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում | մ | 1613 | 12.418 | 20029.864 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.3.2 | Φ110x4.2մմ պոլիէթիլենային խողովակներ, P=0.6ՄՊա, արժեք, մատակարարում, մոնտաժ, փորձարկում | մ | 186 | 2.635 | 490.118 |
| 2.3.3 | Φ273x5մմ պողպատե խողովակ, արժեք, մատակարարում մոնտաժ, փորձարկում | մ | 19 | 23.161 | 440.052 |
| 2.3.4 | Φ250 պողպատե կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 24.110 | 48.220 |
| 2.3.5 | Φ250 պողպատե ազատ կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 18.744 | 37.488 |
| 2.3.6 | Φ250 պոլիէթիլենային ականոց Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 20.334 | 40.667 |
| 2.3.7 | Φ250 պոլիէթիլենային խցափակիչ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 9.675 | 9.675 |
| 2.3.8 | Φ110 պոլիէթիլենային խցափակիչ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 2.434 | 4.869 |
| 2.3.9 | Φ16-Φ40մմ պողպատե խողովակների կտրում, 50հատ, | մ | 7.5 | 0.260 | 1.952 |
| 2.3.10 | Φ16-Φ40մմ պողպատե խողովակների վերականգնում, 50հատ, | մ | 7.5 | 0.434 | 3.256 |
| 2.3.11 | Φ273x5մմ պողպատե խողովակների մոնտաժ հենարանների համար, 2մ, արժեք, մատակարարում, տեղադրում | տ | 0.0661 | 514.527 | 33.990 |
| 2.3.12 | Սետաղական կոնստրուկցիաներ-թերթապողպատ, արժեք, մատակարարում, տեղադրում | տ | 0.0099 | 571.324 | 5.650 |
| 2.3.13 | Φ12մմ ամրան, արժեք, մատակարարում, տեղադրում | տ | 0.00212 | 475.278 | 1.008 |
| 2.3.14 | Φ250մմ խողովակի լվացում ադտահանումով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ | 1630.0 | 0.219 | 356.286 |
| 2.3.15 | Φ100մմ խողովակի լվացում ադտահանումով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ | 186.0 | 0.080 | 14.882 |
| | *2.4 Մեկուսիչ աշխատանքներ* | | | 0.000 | 0.000 |
| 2.4.1 | Սետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ$^2$ | 13 | 0.996 | 12.953 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2.4.2 | Ф273մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոմեկուսացում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ | 4 | 1.647 | 6.589 |
| 2.4.3 | Ф273մմ պոլիէթիլենե խողովակի ջերմամեկուսացում , ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ3 | 0.8 | 21.619 | 17.295 |
| | Ընդամենը՝ ըստ 2 բաժնի | | | | 30057.82 |
| | 3. Դատարկման հոր ԴՀ-1 | | | | |
| | *3.1 Հողային աշխատանքներ* | | | | |
| 3.1.1 | V կարգի բնահողերի քանդում էքսկավատորով բարձումով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | $մ^3$ | 2.2 | 0.807 | 1.774 |
| 3.1.2 | V կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | $մ^3$ | 1.8 | 0.610 | 1.086 |
| 3.1.3 | IV կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | $մ^3$ | 1.0 | 0.488 | 0.488 |
| 3.1.4 | III կարգի բնահողերի քանդում էքսկավատորով կողլիցքով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | $մ^3$ | 7.95 | 0.353 | 2.807 |
| 3.1.5 | Խրամուղու և փոսորակի հատակի լրամշակում ձեռքով IVկարգի բնահողերում | $մ^3$ | 0.47 | 3.864 | 1.816 |
| 3.1.6 | Խրամուղու հատակի լրամշակում ձեռքով IIIկարգի բնահողերում | $մ^3$ | 1.5 | 2.191 | 3.287 |
| 3.1.7 | Նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ օգտակար հանույթի փափուկ բնահողերից | $մ^3$ | 1 | 1.773 | 1.773 |
| 3.1.8 | Խճավազե նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ, ներառյալ խճի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | $մ^3$ | 0.2 | 3.907 | 0.781 |
| 3.1.9 | Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տոփանումով | $մ^3$ | 6 | 0.916 | 5.498 |
| 3.1.10 | Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի բնահողերով, IVկարգ | $մ^3$ | 3.2 | 0.044 | 0.140 |
| 3.1.11 | Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի բնահողերով, IIIկարգ | $մ^3$ | 2.5 | 0.038 | 0.096 |
| 3.1.12 | Ավելորդ բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 1կմ (2.2*2) | տ | 4.4 | 0.896 | 3.943 |
| | *3.2 Բետոնային աշխատանքներ* | | | 0.000 | 0.000 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.2.1 | Միաձույլ բետոն հենարանների և գոտեկապի ստեղծում B12.5 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ$^3$ | 0.420 | 50.471 | 21.198 |
| 3.2.2 | Հավաքովի երկաթբետոնե կլոր հոր D=1000մմ, տեղադրումը | մ3 | 0.60 | 32.101 | 19.260 |
| 3.2.3 | КЦ-10-6а հավաքովի երկաթբետոնե պատի օղակ, 33.75կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 28.441 | 28.441 |
| 3.2.4 | КЦ-10-6 հավաքովի երկաթբետոնե պատի օղակ, 33.75կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 28.441 | 28.441 |
| 3.2.5 | КЦУ-10 հավաքովի երկաթբետոնե հատակի սալ, 80կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 34.906 | 34.906 |
| 3.2.6 | КЦП 1-10-2 հավաքովի երկաթբետոնե ծածկի սալ, 132.0կգ/մ3 ամրանի ծախսով, առանց մտոցի, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 38.790 | 38.790 |
| 3.2.7 | Ճուլբե մտոց, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 51.719 | 51.719 |
| 3.2.8 | Սեյսմակայունության մետաղական կապող էլեմենտներ, արժեքը, մատակարարումը և տեղադրումը | տ | 0.0350 | 538.530 | 18.849 |
| | *3.3 Մետաղական կոնստրուկցիաներ, խողովակներ, խողովակամրաններ* | | | | |
| 3.3.1 | Φ108x4մմ պողպատե խողովակներ, արժեք, մատակարարում, տեղադրում | մ | 20.0 | 5.354 | 107.087 |
| 3.3.2 | Φ100 թուջե սողնակի մոնտաժ, P=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 37.147 | 37.147 |
| 3.3.3 | Φ100 պողպատե կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 3.0 | 9.424 | 28.273 |
| 3.3.4 | Φ100 պողպատե ազատ կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 6.723 | 6.723 |
| 3.3.5 | Φ100 պոլիէթիլենային ականոց Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 4.610 | 4.610 |
| 3.3.6 | Φ250x100 պոլիէթիլենե անցումային եռաբախիկ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 44.849 | 44.849 |
| | *3.4 Մեկուսիչ աշխատանքներ* | | | 0.000 | 0.000 |
| 3.4.1 | Քսուկային շրամեկուսացում բիտումով, երկշերտ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ$^2$ | 5.2 | 1.327 | 6.901 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3.4.2 | Φ108մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոմեկուսացում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ | 20 | 0.725 | 14.509 |
| 3.4.3 | Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ² | 2 | 1.119 | 2.238 |
| | Ընդամենը՝ ըստ 3 բաժնի | | | | 517.43 |
| | 4. Ջրամատակարարման հոր ՋՀ-1 | | | | |
| | *4.1 Հողային աշխատանքներ* | | | | |
| 4.1.1 | VI կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով, բուլդոզերի , կամ էքսկավատորի բազայի վրա | մ³ | 2.20 | 5.868 | 12.909 |
| 4.1.2 | VI կարգի բնահողերի բանդում էքսկավատորով բարձումով | մ³ | 2.2 | 0.808 | 1.777 |
| 4.1.3 | VI կարգի գրունտի մշակում ձեռքով, հետահար մուրճով , հատակի լրամշակում | մ³ | 0.80 | 21.422 | 17.137 |
| 4.1.4 | IV կարգի բնահողերի բանդում էքսկավատորով կողմիցքով. | մ³ | 1.6 | 0.488 | 0.780 |
| 4.1.5 | Խճավազե նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ. ներառյալ խճավազի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ³ | 0.2 | 3.906 | 0.781 |
| 4.1.6 | Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տոփանումով | մ³ | 2.7 | 0.916 | 2.474 |
| 4.1.7 | Ավելորդ բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 1կմ (2.2*2.3) | տ | 5.06 | 0.896 | 4.534 |
| | *4.2 Բետոնային աշխատանքներ* | | | 0.000 | 0.000 |
| 4.2.1 | Միաձույլ բետոն հենարանների և գոտեկապի ստեղծում B12.5 դասի. ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ³ | 0.440 | 50.471 | 22.207 |
| 4.2.2 | Հավաքովի երկաթբետոնե կլոր հոր D=1000մմ, տեղադրումը | մ3 | 0.60 | 32.101 | 19.260 |
| 4.2.3 | ԿԷ-10-6a հավաքովի երկաթբետոնե պատի օղակ. 33.75կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 28.441 | 28.441 |
| 4.2.4 | ԿԷ-10-6 հավաքովի երկաթբետոնե պատի օղակ. 33.75կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 28.441 | 28.441 |
| 4.2.5 | ԿԷԼ-10 հավաքովի երկաթբետոնե հատակի սալ. 80կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 34.906 | 34.906 |
| 4.2.6 | ԿԷԼ 1-10-2 հավաքովի երկաթբետոնե ծածկի սալ. 132.0կգ/մ3 ամրանի ծախսով, առանց մտոցի, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 38.790 | 38.790 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4.2.7 | Թուջե մտոց, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 51.719 | 51.719 |
| 4.2.8 | Սեյսմակայունության մետաղական կապող էլեմենտներ, արժեքը, մատակարարումը և տեղադրումը | տ | 0.0350 | 538.530 | 18.849 |
| | *4.3 Մետաղական կոնստրուկցիաներ, խողովակներ, խողովակամրաններ* | | | | |
| 4.3.1 | Φ273x5մմ պողպատե խողովակ, արժեք, մատակարարում մոնտաժ, փորձարկում | մ | 1.0 | 23.161 | 23.161 |
| 4.3.2 | Φ57x3մմ պողպատե խողովակներ, արժեք, մատակարարում, տեղադրում | մ | 3.0 | 2.312 | 6.935 |
| 4.3.3 | Φ250մմ թուջե սողնակ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 208.776 | 208.776 |
| 4.3.4 | Φ250 պողպատե կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 4.0 | 24.110 | 96.440 |
| 4.3.5 | Φ250 պողպատե ազատ կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 18.744 | 37.488 |
| 4.3.6 | Φ250 պոլիէթիլենային ականոց Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 20.334 | 40.667 |
| 4.3.7 | Վենտիլ Φ50մմ, P=1.0ՄՊա, արժեք, մատակարարում ևտեղադրում | հատ | 2.0 | 8.535 | 17.069 |
| 4.3.8 | Պողպատե ձևավոր մասեր- պողպատե գոտի Φ250x50մմ, արժեք, մատակարարում և տեղադրում | տ | 0.0150 | 1294.158 | 19.412 |
| 4.3.9 | Մետաղական շարժական աստիճաններ, արժեք, մատակարարում, տեղադրում | տ | 0.0150 | 510.793 | 7.662 |
| | *4.4 Մեկուսիչ աշխատանքեր* | | | | |
| 4.4.1 | Քսուկային ջրամեկուսացում բիտումով, երկշերտ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ$^2$ | 5.2 | 1.327 | 6.901 |
| 4.4.2 | Φ273մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոմեկուսացում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ | 0.6 | 1.647 | 0.988 |
| 4.4.3 | Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ ջրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ$^2$ | 4 | 1.119 | 4.476 |
| | Ընդամենը՝ ըստ 4 բաժնի | | | | 752.98 |
| | 5. Ջրամատակարարման հոր ՋՀ-2 | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | *5.1 Հողային աշխատանքներ* | | | | |
| 5.1.1 | VI կարգի գրունտի փխրեցում հիդրոմուրճով, բուլդոզերի , կամ էքսկավատորի բազայի վրա | մ$^3$ | 2.20 | 5.868 | 12.909 |
| 5.1.2 | VI կարգի բնահողերի բանդում էքսկավատորով բարձումով | մ$^3$ | 2.2 | 0.808 | 1.777 |
| 5.1.3 | VI կարգի գրունտի մշակում ձեռքով, հետահար մուրճով , հատակի լրամշակում | մ$^3$ | 0.80 | 21.422 | 17.137 |
| 5.1.4 | IV կարգի բնահողերի բանդում էքսկավատորով կողլիցքով. | մ$^3$ | 1.6 | 0.488 | 0.780 |
| 5.1.5 | Խճավազե նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ, ներառյալ խճավազի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ$^3$ | 0.2 | 3.906 | 0.781 |
| 5.1.6 | Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տրփանումով | մ$^3$ | 2.7 | 0.916 | 2.474 |
| 5.1.7 | Ավելորդ բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 1կմ (2.2*2.3) | տ | 5.06 | 0.896 | 4.534 |
| | *5.2 Բետոնային աշխատանքներ* | | | 0.000 | 0.000 |
| 5.2.1 | Միաձույլ բետոն հենարանների և գոտեկապի ստեղծում B12.5 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ$^3$ | 0.420 | 50.471 | 21.198 |
| 5.2.2 | Հավաքովի երկաթբետոնե կլոր հոր D=1000մմ, տեղադրումը | մ3 | 0.60 | 32.101 | 19.260 |
| 5.2.3 | КЦ-10-6а հավաքովի երկաթբետոնե պատի օղակ, 33.75կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 28.441 | 28.441 |
| 5.2.4 | КЦ-10-6 հավաքովի երկաթբետոնե պատի օղակ, 33.75կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 28.441 | 28.441 |
| 5.2.5 | КЦУ-10 հավաքովի երկաթբետոնե հատակի սալ, 80կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 34.906 | 34.906 |
| 5.2.6 | КЦП 1-10-2 հավաքովի երկաթբետոնե ծածկի սալ, 132.0կգ/մ3 ամրանի ծախսով, առանց մտոցի, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 38.790 | 38.790 |
| 5.2.7 | Թուջե մտոց, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 51.719 | 51.719 |
| 5.2.8 | Սեյսմակայունության մետաղական կապող էլեմենտներ, արժեքը, մատակարարումը և տեղադրումը | տ | 0.0350 | 538.530 | 18.849 |
| | *5.3 Մետաղական կոնստրուկցիաներ, խողովակներ, խողովակաամրաններ* | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5.3.1 | Φ273x5մմ պողպատե խողովակ, արժեք, մատակարարում մոնտաժ, փորձարկում | մ | 1.5 | 23.161 | 34.741 |
| 5.3.2 | Φ108x4մմ պողպատե խողովակներ, արժեք, մատակարարում, տեղադրում | մ | 0.5 | 5.354 | 2.677 |
| 5.3.3 | Φ100 թուջե սողնակի մոնտաժ, P=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 1.0 | 37.147 | 37.147 |
| 5.3.4 | Φ100 պողպատե կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 9.424 | 18.849 |
| 5.3.5 | Φ250 պողպատե կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 24.110 | 48.220 |
| 5.3.6 | Φ250 պողպատե ազատ կցաշուրթ Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 18.744 | 37.488 |
| 5.3.7 | Φ250 պոլիէթիլենային ականոց Py=1.0ՄՊա, արժեք, մատակարարում, տեղադրում | հատ | 2.0 | 20.334 | 40.667 |
| 5.3.8 | Պողպատե ձևավոր մասեր- պողպատե եռաբաշխիկ Φ250x100մմ, Φ100x100մմ, արժեք, մատակարարում և տեղադրում | տ | 0.0300 | 1301.519 | 39.046 |
| 5.3.9 | Մետաղական շարժական աստիճաններ, արժեք, մատակարարում, տեղադրում | տ | 0.0150 | 510.793 | 7.662 |
| | *5.4 Մեկուսիչ աշխատանքներ* | | | | |
| 5.4.1 | Բուսակային շրամեկուսացում բիտումով, երկշերտ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ² | 5.2 | 1.327 | 6.901 |
| 5.4.2 | Φ273մմ պողպատե խողովակի նորմալ հիդրոմեկուսացում, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ | 0.6 | 1.647 | 0.988 |
| 5.4.3 | Մետաղական էլեմենտների ներկում երկշերտ շրակայուն ներկով, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը | մ² | 3 | 1.119 | 3.357 |
| | Ընդամենը՝ ըստ 5 բաժնի | | | | 559.74 |
| | 6. Ջրամատակարարման հոր ՋՀ-3 | | | | |
| | *6.1 Հողային աշխատանքներ* | | | | |
| 6.1.1 | V կարգի բնահողերի բանդում էքսկավատորով բարձումով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ³ | 2.48 | 0.807 | 2.000 |
| 6.1.2 | IV կարգի բնահողերի բանդում էքսկավատորով կողլիցքով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ³ | 1.5 | 0.488 | 0.717 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 6.1.3 | III կարգի բնահողերի բանդում էքսկավատորով կողլիցքով, արտաքին և ներքին խանգարող առարկաների առկայության պայմաններում | մ$^3$ | 5.15 | 0.353 | 1.819 |
| 6.1.4 | Խրամուղու և փոսորակի հատակի լրամշակում ձեռքով IVկարգի բնահողերում | մ$^3$ | 0.47 | 3.864 | 1.816 |
| 6.1.5 | Խրամուղու հատակի լրամշակում ձեռքով IIIկարգի բնահողերում | մ$^3$ | 0.8 | 2.191 | 1.753 |
| 6.1.6 | Նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ օգտակար հանույթի փափուկ բնահողերից | մ$^3$ | 0.5 | 1.773 | 0.887 |
| 6.1.7 | Խճավազե նախապատրաստական շերտ 10սմ հաստությամբ, ներառյալ խճավազի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ$^3$ | 0.2 | 3.906 | 0.781 |
| 6.1.8 | Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի փափուկ բնահողերով, տոփանումով | մ$^3$ | 2 | 0.916 | 1.833 |
| 6.1.9 | Հետլիցք ձեռքով օգտակար հանույթի IV բնահողերով, տոփանումով, | մ$^3$ | 1 | 1.119 | 1.119 |
| 6.1.10 | Հետլիցք բուլդոզերով տեղափոխումով 5մ օգտակար հանույթի բնահողերով, IVկարգ | մ$^3$ | 3.7 | 0.044 | 0.162 |
| 6.1.11 | Ավելորդ բնահողերի տեղափոխում ինքնաթափերով մինչև 1կմ (2.48*2) | տ | 5.0 | 0.896 | 4.445 |
| 6.1.12 | Խճի նախապատրաստական շերտ 15սմ հաստ., ներառյալ խճի արժեքը, մատակարարումը, տեղադրումը | մ$^2$ | 4 | 1.341 | 5.364 |
| 6.1.13 | Խոշորահատիկ ասֆալտաբետոն 6.5սմ հաստությամբ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը, տեղադրումը | մ$^2$ | 4 | 4.456 | 17.824 |
| 6.1.14 | Մանրահատիկ ասֆալտաբետոն 3.5սմ հաստությամբ, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը, տեղադրումը | մ$^2$ | 4 | 3.734 | 14.935 |
| | *6.2 Բետոնային աշխատանքեր* | | | | |
| 6.2.1 | Միաձույլ բետոն հենարանների և գոտեկապի ստեղծում B12.5 դասի, ներառյալ նյութերի արժեքը, մատակարարումը և տեղադրումը | մ$^3$ | 0.420 | 50.471 | 21.198 |
| 6.2.2 | Հավաքովի երկաթբետոնե կլոր հոր D=1000մմ, տեղադրումը | մ3 | 0.60 | 32.101 | 19.260 |
| 6.2.3 | КЦ-10-6а հավաքովի երկաթբետոնե պատի օղակ, 33.75կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 28.441 | 28.441 |
| 6.2.4 | КЦ-10-6 հավաքովի երկաթբետոնե պատի օղակ, 33.75կգ/մ3 ամրանի ծախսով, արժեքը, մատակարարումը | հատ | 1.0 | 28.441 | 28.441 |